



Հայաստանի առողջապահության և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 2 ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Քննաթերթ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1	12 միավոր
Խնդիր 2	12 միավոր
Խնդիր 3	10 միավոր
Խնդիր 4	6 միավոր
Խնդիր 5	10 միավոր
Ըդամենը	100 միավոր

Հունվար 2026թ.

Հարցեր 1-25. Բազմակի ընտրության հարցեր: Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է:

1. Հետևյալ պնդումներից որն է ՍԽԱԼ?

Ա. Ինքնարժեքի հաշվառումը կարող է օգտագործվել պաշարների գնահատման համար միայն ներքին հաշվետվության պահանջները բավարարելու նպատակով:

Բ. Կառավարչական հաշվառումը տրամադրում է համապատասխան տեղեկատվություն որոշումների ընդունման, պլանավորման, վերահսկողության և արդյունքների գնահատման համար:

Գ. Գործառնությունների վերաբերյալ ամենօրյա տեղեկատվությունը կարող է օգտագործվել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ որոշումների համար:

Դ. Ֆինանսական հաշվառման տվյալները կարող են օգտագործվել ներքին հաշվետվությունների նպատակներով:

2. Հետևյալ պնդումները վերաբերում են ռազմավարական պլանավորմանը.

(i) Այն քննարկում է ինչպես քանակական, այնպես էլ որակական հարցերը:

(ii) Այն հիմնականում իրականացվում է կազմակերպության միջին օղակի ղեկավարների կողմից:

(iii) Այն հիմնականում ուղղված է երկարաժամկետ հեռանկարին:

Որ պնդումներն են ճիշտ?

Ա. միայն (i) և (ii)

Բ. միայն (i) և (iii)

Գ. միայն (ii) և (iii)

Դ. (i), (ii) և (iii)

3. Հետևյալներից որն է արտաքին տեղեկատվության օրինակ, որը կարող է օգտագործվել կառավարչական հաշվառման համակարգում

Ա. Սպառողական գների ինդեքսի վիճակագրությունը

Բ. Վաճառվող սեփական արտադրանքի գնացուցակը

Գ. Արտադրական բաժնի ապահոված արտադրության ծավալը

Դ. Հաճախորդներին տրամադրված զեղչերը

4. Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս ՀՀ-ում հինգ տարբեր մարզերում փորձագետ հաշվապահի որակավորում ունեցող հաշվապահների միջին աշխատավարձերը:

մարզ	տարեկան աշխատավարձ ՀՀ դրամ
Սյունիք	21,500,000
Վայոց Ձոր	12,800,000
Երևան	18,200,000
Կոտայք	17,500,000
Շիրակ	16,700,000

Ո՞ր դիագրամը լավագույնն է ներկայացնելու աշխատավարձերի միջև տարբերությունները ըստ մարզերի:

- Ա. շրջանակաձև դիագրամ
- Բ. բազմաչափ սյունակաձև դիագրամ
- Գ. տոկոսային բաղադրիչներով սյունակաձև դիագրամ
- Դ. պարզ սյունակաձև դիագրամ

5. Ստորև նշվածներից ո՞րոնք են հանդիսանում արտադրանքի հիմնական (ուղղակի) ծախսում:

- i. Ուղղակի նյութեր
- ii. Ուղղակի աշխատուժ
- iii. Վարչական ծախսեր
- iv. Արտադրական վերադիր ծախսումներ

- Ա. միայն (i) և (ii)
- Բ. միայն (i), (ii) և (iii)
- Գ. միայն (ii) և (iii)
- Դ. միայն (iv)

6. Կազմակերպությունը արտադրում է մեկ տեսակի արտադրանք: 4,000 միավոր արտադրելու ընդհանուր ծախսումը 20,000,000 դրամ է, իսկ 20,000 միավոր արտադրելու ընդհանուր ծախսումը՝ 40,000,000:

Այս ծավալների միջակայքում հաստատուն ծախսումները չեն փոփոխվում:

Ինչքա՞ն է մեկ միավորի փոփոխուն (variable) ծախսումը դրամով:

- Ա. 800
- Բ. 1200
- Գ. 1250
- Դ. 2000

7. Դետերմինացիայի գործակիցը (r^2) հաշվարկվել է 60%: Ի՞նչ է դա նշանակում:

- Ա. Կախյալ փոփոխականի (y) տատանումների 60%-ը բացատրվում է անկախ փոփոխականի (x) տատանումներով:
- Բ. Կախյալ փոփոխականի (y) տատանումների 40%-ը բացատրվում է անկախ փոփոխականի (x) տատանումներով:
- Գ. Անկախ փոփոխականի (x) տատանումների 60%-ը բացատրվում է կախյալ փոփոխականի (y) տատանումներով:
- Դ. Անկախ փոփոխականի (x) տատանումների 40%-ը բացատրվում է կախյալ փոփոխականի (y) տատանումներով:

8. Ժամանակային շարքերի (time series) վերլուծության մեջ ստորև նշվածներից ո՞ր երկուսն են վերաբերում փոփոխականների երկարաժամկետ տատանումներին:

- i. Սեզոնային տատանումներ
- ii. Ցիկլային տատանումներ
- iii. Պատահական տատանումներ

iv. Թրենդ (երկարաժամկետ միտում)

- Ա. միայն (i) և (ii)
- Բ. միայն (i), (ii) և (iv)
- Գ. միայն (i) և (iii)
- Դ. միայն (ii) և (iv)

9. Ստորև բերված պնդումներից ո՞րն է ճիշտ Մեծ տվյալներ(Big Data)-ի վերաբերյալ:

- Ա. Մեծ տվյալներ(Big Data)-ն վերաբերում է ցանկացած ֆինանսական տվյալների, որը գերազանցում են \$1 միլիարդը:
- Բ. Big Data-ի բնորոշ հատկանիշներն են՝ Արագություն (Velocity), Ծավալ (Volume), Բազմազանություն (Variety), Արժանահավաստություն (Veracity) և արժեք (Value):
- Գ. Big Data-ի արդյունավետ կառավարումը կարող է նվազեցնել մրցակցային առավելությունը:
- Դ. Big Data-ը պարունակում է միայն ոչ ֆինանսական տվյալներ:

10. Սպասվում է, որ նոր արտադրանքը կստեղծի հետևյալ շահույթները կամ վնասները աղույակում բերված հավանականությամբ.

Պահանջարկի մակարդակ	Շահույթ/Վնաս	Հավանականություն
Բարձր	100,000,000	10%
Միջին	50,000,000	50%
Ցածր	20,000,000 վնաս	40%

Ո՞րքան է նոր արտադրանքի շահույթ կամ վնասի սպասվող մեծությունը:

- Ա. 43,000,000
- Բ. 130,000,000
- Գ. 27,000,000
- Դ. 56,666,667

11. Մարտ 20X8-ի ընթացքում ընկերության նյութերի հաշվում կատարվել են հետևյալ գործարքները (մլն դրամով)

- Արտադրությանը ուղարկված նյութեր — **167,000**
- Պահեստ վերադարձված նյութեր — **1,200**
- Նյութերի մնացորդ 1 մարտի — **24,000**
- Նյութերի մնացորդ 31 մարտի — **13,000**

Ո՞րքան նյութ է գնվել 20X8 թվականի մարտ ամսին:

- Ա. 176,800
- Բ. 157,200
- Գ. 154,800
- Դ. 174,400

12. Պահեստի մի հատուկ նյութի վերաբերյալ տրված է հետևյալ տեղեկատվությունը

- Միջին օրական օգտագործում: 400 միավոր
- Առավելագույն օրական օգտագործում: 520 միավոր
- Նվազագույն օրական օգտագործում: 180 միավոր
- Պատվերի կատարման (առաքման) ժամկետ (lead time): 10–15 օր
- Վերապատվիրման քանակ (reorder quantity): 8,000 միավոր

Պակասորդը բացառելու համար ո՞րքան պետք է լինի վերապատվիրման մակարդակը

- Ա. 6,000
- Բ. 5,200
- Գ. 9,800
- Դ. 7,800

13. Ստորև բերվածներից որը չի առնչվում պաշարների պատվերի օպտիմալ քանակի (ՊՕՔ, EOQ) հաշվարկին

- Ա. Պաշարների բուֆերային մակարդակ (Safety inventory)
- Բ. Տարեկան պահանջարկ (Annual demand)
- Գ. Պահպանման ծախսեր (Holding costs)
- Դ. Պատվիրման ծախս (Ordering costs)

14. H&H ընկերությունը վարձատրության համար օգտագործում է խրախուսման սխեմա տարբերակված գործավարձի (differential piecework) ձևով:

Աշխատակիցները վճարվում են հետևյալ սակագներով.

- Մինչև 600 միավոր՝ 400 դրամ յուրաքանչյուր միավորի համար
- 601–650 միավոր՝ 500 դրամ յուրաքանչյուր միավորի համար
- 650+ միավոր՝ 750 դրամ յուրաքանչյուր միավորի համար

Ավելի բարձր սակագնով վճարվում են միայն Կոլյալ շենը գերազանցող միավորները:

17-րդ շաբաթվա ընթացքում աշխատակիցը արտադրել է 660 միավոր: Որքա՞ն դրամ կկազմի նրա այդ շաբաթվա վարձատրությունը:

- Ա. 260,400
- Բ. 272,500
- Գ. 325,750
- Դ. 488,250

15. Իրավաբանական ընկերության վերադիր ծախսումները (overheads) կլանվում են մատուցված խորհրդատվական ծառայությունների ժամերի հիման վրա:

- Բյուջետային վերադիր ծախսումներ՝ 950,000 դրամ
- Փաստացի խորհրդատվական ժամերը՝ 540 ժամ
- Վերադիր ծախսումներ թերկլանվել են (under-recovered) 24,000 դրամով
- Փաստացի վերադիր ծախսումներ՝ 1,050,000 դրամ

Ո՞րքան դրամ է կազմում մեկ ժամի համար վերադիրների կլանման բյուջետավորված դրույքը:

- Ա. 1,989
- Բ. 1,900
- Գ. 1,715
- Դ. 1,804

16. Նորաստեղծ ընկերությունը ներդրել է սահմանային ծախսումներով ինքնարժեքի հաշվառման համակարգ և ունի 7,800,000 դրամ բյուջետավորված սահմանային շահույթ (contribution)՝ հիմնված 13,000 միավոր վաճառքի և 15,000 միավոր արտադրության վրա:

Այս արտադրության մակարդակը համարվում է ընկերության սպասվող երկարաժամկետ նորմալ հզորությունը: Ընկերության բյուջետավորված հաստատուն արտադրական ծախսումները կազմում են **900,000 դրամ:**

Ո՞րքան կկազմի պլանային շահույթը, եթե ընկերությունը անցնի լրիվ ծախսումներով ինքնարժեքի (absorption) հաշվառման համակարգի:

- Ա. 6,780,000 դրամ
- Բ. 7,680,000 դրամ
- Գ. 7,020,000 դրամ
- Դ. 7,920,000 դրամ

17. Մշակման գործընթացում ստացվում են երկու համատեղ արտադրանքներ (PL և SN): Նախորդ ամսվա վերաբերյալ միավորներով տրված տվյալները հետևյալն են.

Արտադրանք	Վաճառք	Պատրաստի արտադրանքի սկզբնական մնացորդ	Պատրաստի արտադրանքի վերջնական մնացորդ
PL	12,000	200	500
SN	8,000	700	400

Նախորդ ամսվա համատեղ արտադրության ծախսերը կազմել են **1,100,000 դրամ**, և դրանք բաշխվել են համատեղ արտադրանքներին՝ **արտադրված միավորների քանակի հիման վրա:**

Որքա՞ն էր նախորդ ամսվա համատեղ արտադրության ծախսումներից PL արտադրանքին բաշխված գումարը:

- Ա. 423,500 դրամ
- Բ. 643,500 դրամ
- Գ. 456,500 դրամ
- Դ. 676,500 դրամ

18. Ստորև տրված տվյալները վերաբերում են երկու էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունների.

Հաշվիչների ցուցմունքների և ներկայացված հաշիվների տվյալներ

Ցուցիչ	Ընկերություն A	Ընկերություն B
Ընդհանուր ծախս (հազ. դրամ)	6,000	10,000
Վաճառված միավորներ (հազ. կիլովատ ժամ)	288	960
Սպառողների թիվը	800	1,600
Էլեկտրաէներգիայի վաճառք (հազ. դրամ)	18,000	50,000

Ի՞նչ են ցույց տալիս ներկայացված թվերը:

- Ա. Ընկերություն A-ն ավելի արդյունավետ է, քան Ընկերություն B
- Բ. Ընկերություն A-ն ավելի քիչ արդյունավետ է, քան Ընկերություն B
- Գ. Ընկերություն A-ն և Ընկերություն B-ն ունեն արդյունավետության նույն մակարդակ
- Դ. Ոչ մի ընկերություն արդյունավետ չէ

19. Ընկերությունն ունի երկու արտադրատեսակների՝ A և B, հետևյալ բյուջեն.

Ցուցանիշ	Արտադրատեսակ	
	A	B
Վաճառք (միավոր)	2,000	4,500
Արտադրություն (միավոր)	1,750	5,000
Աշխատանքային ժամեր		
Վարպետների աշխատուժ (4,000 դրամ/ժամ)	2 ժամ/միավոր	2 ժամ/միավոր
Հասարակ աշխատողների աշխատուժ (2,800 դրամ/ժամ)	3 ժամ/միավոր	4 ժամ/միավոր

Որքա՞ն գումար է նախատեսված ընկերության բյուջեով հասարակ աշխատողների վարձատրության համար:

- Ա 42,000,000 դրամ
- Բ 54,000,000 դրամ
- Գ 70,700,000 դրամ
- Դ.101,000,000 դրամ

20. Ընկերության հետևյալ բյուջետային տվյալները վերաբերում են առաջիկա եռամսյակին.

- Վաճառքներից ստացվող եկամուտը՝ 450,000,000 դրամ
- Համախառն շահութաբերությունը՝ 30%
- Առևտրային պարտավորությունների նվազում ժամանակահատվածի վերջին՝ 10,000,000 դրամ
- Պաշարների հաշվեկշռային արժեքի աճ ժամանակահատվածի վերջին՝ 18,000,000 դրամ

Որքա՞ն է կազմում հաշվետու եռամսյակում առևտրային պարտավորությունների բյուջետավորված վճարումը (մատակարարներին կատարվելիք կանխիկ վճարումները):

- Ա. 343,000 հազ.դրամ
- Բ. 323,000 հազ.դրամ
- Գ. 307,000 հազ.դրամ
- Դ. 287,000 հազ.դրամ

21. Ներդրումային նախագծի վերաբերյալ տվյալները հետևյալն են.

- Սկզբնական ներդրման արժեքը(վճարվում է անմիջապես նախագծի սկզբում)՝ 50,000 հազ. դրամ
- Տարեկան դրամական ներհոսք՝ 20,000 հազ. դրամ
- Կապիտալի արժեքը (discount rate)՝ տարեկան 5%
- Նախագծի տևողությունը՝ 8 տարի

Որքա՞ն է նախագծի զուտ ներկա արժեքը (ՀՆԱ, NPV):

- Ա. 129,260 հազ. դրամ
- Բ. 79,260 հազ. դրամ
- Գ. 179,260 հազ. դրամ
- Դ. (79,260) հազ. դրամ

22. Ստորև բերված որ պնդումն է նկարագրում ծավալի շեղումը (volume variance):

- Ա. Ճկուն բյուջեի և փաստացի արդյունքների տարբերությունը
- Բ. Հաստատուն բյուջեի և ճկուն բյուջեի տարբերությունը
- Գ. Հաստատուն բյուջեի և փաստացի արդյունքների տարբերությունը
- Դ. Սկզբնական բյուջեի և փաստացի արդյունքների տարբերությունը

23. FGH ընկերության բյուջետային և փաստացի տվյալները ներկայացված են ստորև.

- Բյուջետավորված հաստատուն վերադիր ծախսումներ – 1,500,000 դրամ
- Բյուջետավորված արտադրության ծավալ (միավոր) – 30,000
- Փաստացի հաստատուն վերադիր ծախսումներ – 1,150,000 դրամ
- Փաստացի արտադրանքի արտադրության ծավալ – 24,000 միավոր

Ո՞րքան է կազմում հաստատուն վերադիր ծախսումների ծավալային շեղումը (Fixed Overhead Volume Variance):

- Ա. 350,000 դրամ – բարենպաստ
- Բ. 50,000 դրամ – բարենպաստ
- Գ. 50,000 դրամ – անբարենպաստ
- Դ. 300,000 դրամ – անբարենպաստ

24. Ապրիլ ամսվա CK արտադրատեսակի վերաբերյալ տվյալները հետևյալն են.

Ցուցանիշ	Փաստացի	Բյուջետավորված
Պատրաստաված արտադրանք (միավոր)	480	500
Օգտագործված հումք (կգ)	1,466	1,400
Ձեռքբերված և օգտագործված նյութի արժեք	870,500 դրամ	770,000 դրամ

Ո՞րքան է կազմում նյութերի օգտագործման շեղումը (Materials Usage Variance):

- Ա. 100,500 դրամ – անբարենպաստ
- Բ. 34,666 դրամ –բարենպաստ
- Գ. 67,100 դրամ – անբարենպաստ
- Դ. 29,413 դրամ –բարենպաստ

25. Փոքր արտադրական ստորաբաժանման վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանի տվյալներն են.

- Բյուջետավորված աշխատաժամեր – 8,500 ժամ
- Փաստացի աշխատած ժամեր – 8,200 ժամ
- Թողարկված արտադրանքի ստանդարտ աշխատաժամանակ (Standard hours produced) – 8,300 ժամ

Ո՞րքան է տվյալ ժամանակաշրջանի արդյունավետության գործակիցը (Efficiency Ratio)

- Ա. 102%
- Բ. 104%
- Գ. 99%
- Դ. 101%

Խնդիր 1

Տաք Հագուստ ՍՊԸ բավական հայտնի ՀՀ արտադրողից, միավորի գինը 7,000 դրամով գնում է սվիտերներ և վաճառում դրանք Wildberries մարքետպլեյսում միավորի գինը 15,000 դրամով: Այդ ապրանքը գնվելուց հետո տեղափոխվում է մարքետպլեյսի Երևանյան պահեստ, որտեղ միավորի պահպանման ծախսը կազմում է 200 դրամ ամսական: Յուրաքանչյուր անգամ խմբաքանակ պատվիրելիս առաջանում են տեղափոխման, որակի ստուգման և նմանատիպ ծառայությունների հետ կապված ծախսեր, որի գումարը խմբաքանակի մեծությունից կախված չէ և կազմում է 480,000 դրամ: Նույն որակի և նույն դիզայնով սվիտերներ կարելի է պատվիրել Չինաստանում, որտեղ միավորի ձեռք բերման գինը կազմում է 4,800 դրամ, սակայն այն հանգամանքը որ չինական է և շատ ճանաչված չէ ստիպում է այն վաճառել միավորը 12,000 դրամով: Այդ դեպքում ավելի հարմար է ապրանքը պահեստավորել մարկեթպլեյսի Մոսկվայի պահեստում, որտեղ պահպանման ծախսը կկազմի ամսական 80 դրամ, իսկ Չինաստանից Մոսկվայի պահեստ տեղափոխման կազմակերպումը կարժենա ամեն խմբաքանակի դեպքում 1,200,000 դրամ: Ներկայումս ապրանքը պատվիրվում է ՀՀ արտադրողից եռամսյակը մեկ անգամ, այնպես որ բավարարվի տարեկան վաճառքի պահանջարկը:

Պահանջվում է:

Ենթադրելով որ ցանկացած տարբերակի դեպքում տարեկան վաճառքը կկազմի 10,000 հատ սվիտեր և տեղի կունենա տարվա մեջ հավասարաչափ, իսկ մատակարարումը տեղի կունենա ճիշտ այն պահին երբ պահեստում առկա ապրանքը վերջանում է, պատասխանեք հետևյալ հարցերին.

(i) Ինչ խմբաքանակներով պետք է պատվիրվեն սվիտերները ՀՀ արտադրողից, պաշարների կառավարման ծախսերը նվազագույնի հասցելու համար և որքան ծախս կխնայվի պաշարների այդ խմբաքանակով պատվիրելու դեպքում: **(4 միավոր)**

(ii) Որքան կկազմեն պատվիրման և պահպանման ծախսերը, եթե որոշվի վաճառել չինական արտադրողի սվիտերերը և ընտրվի պատվիրման օպտիմալ քանակով պատվիրելու ռազմավարություն: **(2 միավոր)**

(iii) Պատվիրման ճիշտ ռազմավարություն ըտրելու դեպքում, որ արտադրողից գնել և վաճառելն է ավելի շահութաբեր: **(3 միավոր)**

(iv) Ինչ ենթադրություններ են դրված ՊՕՔ մոդելի հիմքում, որոնք տարբերվում են իրական կյանքում տեղի ունեցող իրավիճակներից: **(3 միավոր)**

(Ընդամենը 12 միավոր)

Խնդիր 2

Ինտեր ինվեստ ընկերությունը նախատեսում է նոր գործարան կառուցելու համար ներդրում կատարել: Ներդրումից բխող տարեկան հավելյալ շահույթների (կամ վնասների) գնահատականը հետևյալն է՝

Տարի	Շահույթ (վնաս)՝ հազ. դրամ
Տարի 1	(2,000)
Տարի 2	4,000
Տարի 3	6,000
Տարի 4	8,000
Տարի 5	6,000

Նախագծի մեկնարկին անհրաժեշտ ներդրումը կկազմի 20,000,000 դրամ իսկ մնացորդային արժեքը 5 տարի անց զրո կլինի, և այդ գումարը կծախսագրվի գծային մեթոդով (straight-line depreciation): Հաշվարկված մաշվածությունը արդեն ներառված է վերը նշված շահույթների մեջ, որոնք ենթադրվում է, որ առաջանում են յուրաքանչյուր տարվա վերջին:

Պահանջվում է՝

(ա) Ո՞րքան է նախագծի հետստացման ժամկետը(ՀՄԺ): Եթե ներդրումային որոշում կայացնելու նպատակով, ընկերությունը սահմանել է 2 տարի ՀՄԺ, ընդունելի է արդյոք այս նախագիծը: Պատասխանում ներառեք ՀՄԺ մեթոդի որոշման կանոնը: **(3 միավոր)**

(բ) Որքա՞ն է ներդրման գուտ ներկա արժեքը (ՉՆԱ/NPV)՝ կիրառելով տարեկան 10% զեղչման դրույքը (discount rate): Նույն ներդրմամբ ինչ գումարի տարեկան հավերժավճարը համարժեք կլիներ այս նախագծին: **(4 միավոր)**

(գ) Ընկերության առկա բոլոր ներդրումային նախագծերի միջինացված (ԵՆՆ/IRR) կազմում է 15%, իսկ սահմանված քաղաքականությամբ ընկերության պահանջվող նվազագույն շահութաբերությունը՝ 10% է: Ընկերությունը հնարավորություն ունի նախաձեռնել մի նախագիծ որի համար պահանջվում է 3,605 հազ. դրամ սկզբնական գումար, որի դիմաց Ընկերությունը ներդրումից մեկ տարի հետո, 5 տարի շարունակ կստանա տարեկան 1,000,000 դրամ: Ընկերության կառավարիչների բոնուսային վարձատրությունը նախատեսված է, բոլոր ներդրումային նախագծերի հանրագումարային միջինացված (ԵՆՆ/IRR)-ն պահպանելու կամ բարձրացնելու դեպքում: Ընկերության քաղաքականության տեսանկյունից ո՞րն է ընդունելի որոշումը (ԵՆՆ/IRR) չափանիշով (ներդնել թե հրաժարվել ներդրումից) և ինչ դիրքորոշում(դրական թե բացասական) կհայտնեն այդ նախագծի վերաբերյալ Ընկերության կառավարիչները: Պատասխանը հիմնավորեք: **(5 միավոր)**

(Ընդամենը 12 միավոր)

Խնդիր 3

Աելիո ՍՊ Ընկերությունը արտադրում է մեկ տեսակի արտադրանք և ունի արտադրական ծախսումների հետևյալ ճկուն բյուջեները հաշվետու ժամանակաշրջանի համար.

Արտադրության քանակ	12,000 միավոր	15,000 միավոր	18,000 միավոր
Ուղղակի նյութ AB /դրամ/	1,800,000	2,250,000	2,700,000
Ուղղակի նյութ CD /դրամ/	8,880,000	11,100,000	13,098,000
Աշխատանք (փոփոխական և հաստատուն) /դրամ/	12,850,000	15,212,500	17,575,000
Վերադիր ծախսումներ (բացառությամբ անուղղակի աշխատավարձի) /դրամ/	6,200,000	6,590,000	6,980,000

Բյուջեն ներառում է հետևյալ ենթադրությունները.

(i) Արտադրանքի յուրաքանչյուր միավորը պահանջում է՝

- Նյութ AB – 0.2 կգ
- Նյութ CD – 0.4 կգ
- Ուղղակի աշխատանք – 12 րոպե

(ii) Նյութ CD մատակարարողը տրամադրում է 10% զեղչ՝ կատարված գնումների այն մասի վրա, որը գերազանցում է 6,000 կգ-ը՝ մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունը արտադրել է 17,000 միավոր արտադրանք և իրականացրել է հետևյալ արտադրական ծախսումները.

Ուղղակի նյութեր.

- Նյութ AB – 2,512,500 /դրամ/
- Նյութ CD – 12,559,000 /դրամ/
- Աշխատանքի վարձատրություն (փոփոխական և հաստատուն) – 16,444,500 /դրամ/
- Վերադիր ծախսումներ (բացառությամբ անուղղակի աշխատավարձի) – 6,657,500 /դրամ/

Պահանջվում է.

ա) Հաշվել նյութ CD-ի 6,000 կգ-ից ավել մասի, 1 կգ-ի ձեռք բերման բյուջետավորված գինը

(3 միավոր)

բ) Սահմանել հաշվետու ժամանակաշրջանի համար **ճկուն բյուջեի ցուցանիշները (flexed budget)** կազմելով հետևյալ աղուսյակը, որում տրված են փաստացի ծախսումների տվյալները, և հաշվարկել շեղումները նշելով բարենպաստ են թե անբարենպաստ

Արտադրության քանակ	17,000 միավոր ճկուն բյուջե	17,000 միավոր փաստացի ծախս	Շեղում Բ/Ա
Ուղղակի նյութ AB		2,512,500	
Ուղղակի նյութ CD		12,559,000	
Աշխատանք (փոփոխական և հաստատուն)		16,444,500	
Վերադիր ծախսումներ (բացառությամբ անուղղակի աշխատավարձի)		6,657,500	

(5 միավոր)

գ) Հաշվետու ժամանակաշրջանում նյութ AB-ի գնման գինը համապատասխանել է բյուջեին (այսինքն՝ գնային շեղում չկա)։ Հաշվել նյութ AB-ի օգտագործման շեղումը (materials usage variance) կիլոգրամներով՝ կլորացելով մինչև մոտակա ամբողջական կիլոգրամ։

(2 միավոր)

(Ընդամենը 10 միավոր)

Խնդիր 4

Լենսիա Ընկերությունը կիրառում է պատվերի ինքնարժեքի հաշվառման համակարգ և վերադիր ծախսումները կլանում է ուղղակի աշխատուժի արժեքի հիման վրա: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են երեք պատվերներ (աշխատանքներ), որոնց տվյալները հետևյալն են.

	Պատվեր 1	Պատվեր 2	Պատվեր 3
Անավարտ արտադրանքի սկզբնական մնացորդ / հազ. դրամ/	8,500	0	46,000
Ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված նյութեր / հազ. դրամ/	17,150	29,025	0
Ժամանակաշրջանի աշխատուժ/ հազ. դրամ/	12,500	23,000	4,500

Ժամանակաշրջանի վերադիր ծախսումները ճիշտ համապատասխանել են բյուջեին՝ 140,000 հազ. դրամ: Փաստացի աշխատուժի ծախսումները նույնպես նույնն են, ինչ բյուջետավորվածը: Ժամանակաշրջանի վերջում միայն Պատվեր 1-ը և Պատվեր 2-ն են մնացել անավարտ: Պատվեր 3-ը ավարտվել է ժամանակաշրջանի ընթացքում և բաղկացած է 2,400 միավոր միանման էլեկտրոնային պլատաներից: Ընկերությունը վաճառքի գինը որոշելու համար արտադրական ընդհանուր ծախսումներին կիրառում է 50% հավելագին:

Պահաջվում է

ա) Հաշվարկել թե որքա՞ն է անավարտ արտադրության վերջնական մնացորդի գումարը:

(3 միավոր)

բ) Հաշվարկել թե որքա՞ն է Պատվեր 3-ին բաժին ընկնող վերադիր ծախսումները: **(1 միավոր)**

գ) Հաշվարկել Պատվեր 3-ի շրջանակում արտադրված պլատաների վաճառքի գինը: **(2 միավոր)**

(Ընդամենը 6 միավոր)

Խնդիր 5

Հուլիս ամսին Սկրամ ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից աշխատած իրական ժամերի ընդհանուր թիվը կազմել է 30,508, իսկ բյուջեով նախատեսված էր 28,570 ժամ: Փաստացի կատարված աշխատանքի համար ստանդարտ ժամերի ընդհանուր թիվը կազմել է 29,400:

(ա) Հաշվեք և լրացրեք համապատասխան վանդակներում (տոկոսներով, 1 տասնորդական նիշի ճշտությամբ) հետևյալ ցուցանիշները

(ա) Գործունեության (արտադրության ծավալի) գործակից/Activity ratio	(1 միավոր)
(բ) Արդյունավետության գործակից/Efficiency ratio	(1 միավոր)
(գ) Կարողության գործակից/Capacity ratio	(1 միավոր)

Սկրամ ՍՊԸ-ն ունի 2 ստորաբաժանում՝ հետևյալ տեղեկություններով.

Սկրամ ՍՊԸ-ի A ստորաբաժանմանը առաջարկվել է 50,000 հազ. դրամ ներդրում պահանջող և 10,000 հազ. դրամ շահութաբերությամբ մի նախագիծ: Ընկերության կապիտալի արժեքը 17% է: Ստորաբաժանման աշխատանքը գնահատվում է ներդրման շահութաբերության (ՆՇ/ROI)-ի հիման վրա, և ՆՇ/ROI -ի հետ կապված բոնուսը բավականաչափ բարձր է՝ մենեջերների վարքագծի վրա ազդելու համար: Առանց նախագծի՝ A բաժինը ներկայումս ունի հետևյալ ցուցանիշները՝

A ստորաբաժանում	\$
Շահույթ	45,000 հազ. դրամ
Գործարկված կապիտալ	150,000 հազ. դրամ
ՆՇ/ROI	30%

(դ) Նախագծի վերաբերյալ ի՞նչ որոշում կկայացնեն A ստորաբաժանման մենեջերները (ներդնել/հրաժարվել), եթե նրանք գործեն իրենց բաժնի (և իրենց բոնուսի) լավագույն շահերից ելնելով: Պատասխանը հակիրճ հիմնավորեք **(2 միավոր)**

(ե) Նախագծի վերաբերյալ ի՞նչ որոշում կկայացնեն Ընկերության բարձր ղեկավարները(ներդնել/հրաժարվել), եթե նրանք գործեն Ընկերության ընդհանուր շահերից ելնելով: Պատասխանը հակիրճ հիմնավորեք **(2 միավոր)**

Սկրամ ՍՊԸ-ի ներդրումային կենտրոններից մեկն ունի 80,000 հազ. դրամ զուտ ակտիվներ և ստացել է 16,000 հազ. դրամ շահույթ նախքան տոկոսները: Կապիտալի արժեքը 12% է:

Հնարավորություն է առաջացել ներդրումներ կատարել 10,000 հազ. դրամ արժողությամբ նոր նախագծում, որը տարեկան կապահովի 1,500 հազ. դրամ շահույթ նախքան տոկոսներ:

(զ) Որքա՞նով կփոխվի մնացորդային շահույթը ներդրումն իրականացնելու դեպքում (հազ. դրամով ամբողջներով): **(2 միավոր)**

(է) Նախորդ կետի պատասխանի հիման վրա, ներդրում կատարելիս մնացորդային շահույթը փոփոխությամբ պայմանավորված, արդյո՞ք ներդրումային կենտրոնի կառավարիչը կցանկանա իրականացնել ներդրումը: Պատասխանը հակիրճ հիմնավորեք: **(1 միավոր)**

(Ընդամենը՝ 10 միավոր)